Եկեղեցեաց մէջ Հռովմէականաց եկեղեցին փառաշէն է, և յաճախութեամբ պատուական քարերու՝ նմանութիւն կը բերէ Վենետկոյ ճոխ և վայելչազարդ եկեղեցեաց։ Սակայն այնու ամենայնիւ, դեռ շատ հեռու է իւր նախատիպէն, շատ բան դեռ կը պակասի Փարիզի հասնելու։ Վաճառականութիւնն մեծ է, մանաւանդ անգործ կամ հում ապրանքով, այնպէս որ տարուէ տարի Օտեսայի մէջ եղած շահավաճառն՝ որ 200 միլիոն բուբլեաց կը հասնի, կէսը՝ այն է 100 միլիոնն՝ արտասահման կ'երթայ, ցորեն, իւղ, աղ, բուրդ, և այլն։ Օտեսա կէս օր միայն մնացի. օգոստոս 19, երեկոյեան ժամը իններն, երկաթուղւով ճամբայ ելայ դէպ 'ի Փոտոլիա։ Օտեսայէ երկաթուղւով մեկնողաց 'ի Փոտոլիա՝ խորհուրդ կու տամ. եթէ անպատճառ փութալու հարկ չունին, ուրբաթ երեկոյի ընթացքով մեկնիլ, զի միւս օրեր՝ ինչպէս ինձ պատահեցաւ այս անգամ, իսրայելացւոց բազմութիւնն՝ բոլոր ճանապարհին մէջ անհանգստութիւն և նեղութիւն կը պատճառեն. ասոր մինչև ցԿամենից կը վխտան որդիք Իսրայելի. իսկ Կամենից՝ որ երբեմն Հայոց վաճառաշահ քաղաք էր, այժմ բոյն է Հրէից։

Օտեսայէ Կամենիցի մերձաւոր երկաթուղւոյ կայարանը Փրոսքուրով քաղաքն է, անտի ցԿամենից հարկ է կառաք երթալ. միւս օր կէս օրին հասայ 'ի Փրոսքուրով. անկարելի էր նոյն օրը հասնիլ 'ի Կամենից, զի դեռ 90 վերստ ճամբայ կար ընելու։ Օտար և նոր աշխարհք էր ինձ համար Փոտոլիա, ցանկալի էր լոյս աչքով ճանապարհորդել. բարեպատեհ դէպք մի՝ այս նպատակին նպաստաւոր եղաւ։ Օտեսա ծանօթանալով Սթանքևիչ